ՀՅԻՄԱՐԱՆ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՅ

ՅԱՒԵԼՒՍ 1։ 1840։ ԹԻՒ 19։

Ալբրենի այծ։

Ալբրենի այծը Եւրոպայի մեծ լեռներուն խիստ հեռաւոր կողմերը կբնակի։ Շատ նշանաւոր է խիստ հեռու և ճիշտ իր ուզած տեղը ցատկելու համար։ Յայտնի ճղաքուածներուն վրայէն մեկալ կողմը կանցնի. լեռներուն վրայ դուրս ցցված քարի մը վրայէն առանց սխալելու միւս քարին վրայ կըցատկէ. երբուն կամ մինչև անգամ քառասուն կանգուն բարձրութենէ ինքզինքը վար կընետէ անանկ փոքրիկ տեղի մը վրայ՝ ուր հազիւ միայն ոտքերը հաստատելու տեղ կայ։ Ասոնք վայրենի այծին բնական կարողութիւններն են, որ զրեթէ իր ծնած վայրկեանէն ինքը ունի ասոնք, և չէ թէ վարժութեամբ ստացած է. քանզի վայրենի այծին փոքրիկը միայն հարկաւոր եղած ուժին չափօտ է որ իր մեծ ընկերներուն արագաշարժութեանը զինքը նմանցունէ։

Եւ սակայն մարդս շարունակ վարժութեամբ կընայ հաւասարիլ անոնց։ Ընտելեան լեռներուն վրայի վայրենի այծի ոլորտը իր բնական կարողութիւնները և արհեստին օգնութիւնները մէկտեղ բերելով՝ ան աքանչելի կարողութեան տէր կենդանիին դէմ ինքը յաղթող կըգտնըվի, և ան յաղթութիւնը մեզի կըցուցընէ թէ շատ քիչ բաներ կան որոնց մարդկային կարողութիւնը չի կրնար հասնիլ։

Ալբրենի այծին որսորդը իր բազմաշ-

խատ և վտանգաւոր արհեստը քանելու համար զիշերը ձամբայ կելլայ : Իր դիտաւորութիւնը է արշալոյսին առենը ոչխարներուն հօտը չելած լեռներուն խիստ բարձր և խուռուէտ մասերուն վրայ հասնիլ , ուր որ վայրկի այծը կանուխ ձարակելու կուգայ : Այդ վայրենի այծը միայն առտուընկոյ և երեկոյեան կը ձարակի : Երբոր որսորդը ան տեղը կը հասնի ուր որ կրնայ իր որսը գտնալ , դիտակով մը ջրա կողմը կրնայի : Թէ որ անտեղեակը այծը չի տեսնայ , էվելն բարձրը կելլայ · բայց Թէ որ տեսնայ՝ կը ջանայ բլուրի մը ետևէն պտըտելով կամ ժայռի մը ետևը փախվըտելով անոր վրայի կողմը ելլալ և մօտենալ : Երբոր այնչափ մօտենայ՝ որ կարենայ կենդանիին եղջիւրները տեսնալ , (որ փոքրիկ՝ կլոր՝ սրածայր՝ և ետևի կողմը ծռած են , ինչպէս որ վերի պատկերին մէջը կերևայ ,) հրացանին երկաթը քարի մը վրայ կը դնէ՝ և հանդարտութեամբ կը սկսի նշան առնել : Հազիւ կը լլայ որ սխալ նշան առնէ : Թէ որ այծը զարնուվի խնայ , որսորդը վրան կը վազէ , ծունկերուն ջղերը կը կտրէ որ փախչելու կարող չըլլայ , և եղջը կը սկսի մոռնալ Թէ ինչ ձամբով կրնայ անիկա իր գիւղը տանիլ : Թէ որ ձամբան խիստ դժուարին ըլլայ՝ բաւական կը սեպէ այծին մորթը հանել · բայց Թէ որ ձամբան անանկ դիւրին ըլլայ որ բեռովը կրնայ երթալ , ուսերուն վրայ կառնէ և տուն կը բերէ անիկա իր ընտանեացը , ձանապարհին երկարութենէն և անցնելու բլուրներէն և առապարներէն չի վախնալով :

Հայց երբոր աչալուրջ կենդանին իր որսորդը տեսնայ՝ ինչպէս որ հասարակօրէն կը պատահի , շատ շուտով կը փախչի սառնացած ձուներուն և ծայրասար ժայռերուն վրայէն անհնարին արագութեամբ ցատկելով : Վանաւանդ անտառները շատ դժուարին է մօտենալ վայրենի այծին , երբոր շատերը մէյտեղ գտնըվին : Երբոր հօտը կը ձգտակի , մեկերնին իբրև պահապան բարձր ժայռի մը վրայ կելլայ կը կայնի , ուրկից որ իրենց արածած բոլոր տեղին վրայ կրնայ · և երբոր վտանգաւոր բան մը տեսնալու ելլայ՝ մեկ սուր ձայն մը կը հանէ սուլելու պէս · միւսները աս ձայնը առածնուն պէս ամէնը մեկէն դէպի իրեն կը վազեն , որ ինչ կերպ վտանգ ըլլալը իրենք իրենց տեսնան և դատեն : Թէ որ զիշատիչ գազան մը կամ որսորդ մը տեսնան , մէջերնուն ամենէն էվէլի փորձառուն իրենց առջևը կ'ընայ , և մեկզմեկու ետևէ կը սկսին փախչիլ երթալ խիստ անմատչելի տեղերը :

Ահա անտառը կը սկսին որսորդին դժուարին աշխատութիւնները · քանդի անտառը սերտը վառելով անոնց ետևէն շատ հեռուները կերթայ · և բոլոր վտանգները բան մը չեն երևար իր աչքին : Ոտներուն վրայէն կանցնի՝ առանց մտմտալու Թէ ան նոնց տակը վտանգաւոր տեղեր կրնան ըլլալ : Ոտներուն խիստ դժուարին ձամբաները կը մտնայ · պատի պէս շիտակ բարձր տեղերէն ձանկռտելով վեր կելլայ · մեկ ժայռէն մեկալ ժայռին վրայ կը յաթկէ առանց մտմտալու Թէ ինչպէս ետ պիտի դառնայ : Հատ անգամ՝ որ ասանկ տաքցած իր որսին ետևէն է , զիշերը վրայ կուգայ · բայց ասանկ պզտիկ զինքը ետ չի ձգեր : Կը մըտածէ որ վայրենի այծը զիշերը պիտի կայնի իրեն պէս , և որ՝ հետևեալ օրը նորեն կրնայ հանիլ անոր : Հատ զիշերը կանցնունէ չէ Թէ ծառի մը տակ կամ լեռան մեկ խոռոչին մէջը՝ ինչպէս որ դաշտերուն մէջը որսորդութիւն ընողը կընէ , հապա առանց ծածկոցի մերկ ապառաժի մը կամ խորտաբորտ քարերու դէզի մը վրայ : Ինքը հոն մինակ է՝ առանց կրակի և առանց ձրագի · բայց իր տոպրակէն կուտոր մը պանիր և քիչ մը գարիւե շինված հաց կը հանէ՝ որ իր սովորական կերակուրն է : Իր հացը անանկ ամուր է՝ որ պէտք է քարով կոտրել ան կամ իր կայծինովը ձեղքել՝ որնոր միշտ իր հետը կը պըտըտցունէ սառն ժայռերուն վրայ ելլալու համար իր ուտացը կոտրելու տեղ բանալու : Իր աղքատիկ կերակուրը շուտ մը վերջանալէն ետքը՝ գլխուն տակը քար մը կը դնէ և խկոյն կը քնանայ , այծին որ կողմը երթալուն վրայ երեսները տեսնալով : Ուտելվան մաքուր օդովը կանուխ կանգնելնայ կելլայ , ոտկոներուն մէջը Թափանցած ցուրտովը կը սառչըի , որպէս էտևէն հասնելու համար իր անցնելու դժուարին տեղվանքը աչքերովը կը չափէ , տոպրակը կռնակը կը զարնէ , և նորէն կը-

կըսի առաջ վաղել նոր վտանգներու պատահելու։ Ես քաջասիրտ և յարատեւող որսորդները շատ անգամ օրերով առանց պատ լեռներուն ամայի անապատները կըմտնան, և ան միջոցին իրենց ընտանիքները՝ մանաւանդ իրենց ապերջանիկ կնիկները անտանելի խռովութեան մէջ կըմնան անոնց ազատ մնալուն վրայով։

Նէ թէպէտ քաջ տեղեակ են որսորդները իրենց պատահելու վտանգներուն, բայց սակայն վայրենի այծի որսորդութիւնը ա նանկ բան մըն է՝ որուն հետեւողները անհնար է որ անկից ետ կենան։ Սօշիւր բնաբանը դեղեցիկ երիտասարդ մը կըճանչնար՝ որ կարգըվելու վրայ էր. առ յանճնապատրաստան որսորդը առանկ կըխօսէր ան բնաբանին։ «Իմ մեծ հայրս վայրենի այծի որսորդութենէ կորսըվեցաւ։ Իմ հայրս ալ ան ճամբուն մէջը մեռաւ. և իմ նոյն ճամբուն մէջը մեռնելս ալ անանկ աղէկ դիտեմ, որ առ միշտ որսորդութեան տարած իմ տոպրակս իմ պատանքս կըկոչեմ։ Ստոյգ գիտեմ որ ուրիշ պատանք մը ունենալու չեմ. և սակայն թէ որ դուն դէս մեծամեծ հարստութիւններու հասցունել ուզէիր ան պայմանովը՝ որ այծի որսորդութենէ ետ կենամ, ես քու բարերարութիւնդ չի պիտի ընդունէի»։ Սօշիւր կըպատմէ թէ ինքը առ երիտասարդին հետը շատ անգամ ընկերութեամբ Ըլպեան լեռները գացած է, և թէ՝ երիտասարդը սքանչելի ճարտարութեան և ուժի տէր էր, բայց առնցմէ էվել էր իր յանճնապատրաստան համարձակութիւնը։ Նէ կըսէ ևս թէ խեղճ որսորդը երկու տարիէն ետև անգամ մը ապառաժ քարի մը վրայ ցաթկելու առենը ոտքը սըկըրդըվելով ինկաւ մեռաւ, և անանկ իր յուսացած վախճանին պատահեցաւ։ Ես որսորդները հրապուրողը չէ թէ որսին բանի մը արժէն է՝ հապա բուն ինքը որսորդութիւնն է։ Հոգսին ու վախին փոփոխակի գալը, հանապազորդեան յորդորմունքը կամ զրգիռը, և բուն ան վտանգները այծին որսորդը կըքաջալերեն որ բոլոր ուրիշ հաճութիւնները ոչինչ սեպէ։

Շատ քիչ անձինք կըզտնըվին որ առ արհեստին մէջը ծերանան. և գտնըվածները ուժն ի դէմքին վրայ իրենց վարած կեանքին նշանները յայտնի կերևան։ Ա յրենկ և քիչ մը զարհուրելի ու այլանդակ դէմք մը կունենան, որով բազմամարդ ժողովքի մէջ կրնան ճանչցըվիլ։ Անապաշտ զեղջուկներուն շատերը կըհաւատան թէ կախարդ են անոնք, և չար հոգիներուն հետը հաղորդակցութիւն ունին, և նոյն չար հոգին է որ անոնք ապառաժներուն վրայ կըտեսէ։

Հինայ Օվկիսկերիի մէջը վայրենի այծերը քիչցան, որովհետև բնակիչները թոյլ տուութիւն ունէին ամէն եղանակի մէջ անոնք որսալու. բայց անշուշտ նորէն պիտի շատնան, որովհետև հին կանոնները նորէն հաստատուեցան, և անոր որսորդութեանը ժամանակ որոշուեցաւ։

Դատարկութիւն։

Ո՛ր և իցէ մարդ դատարկութիւնը մեծ չարիք համարելու է իրեն։ Ամէ հարուստ ըլլայ և թէ աղքատ ինքը ապերջանիկ պիտի ըլլայ, և իրեն տակը եղողներն ալ ապերջանիկ պիտի ընէ։ Ասոր առանկ ըլլալը կրնանք անշուշտ իմանալ՝ միայն մարդուն առջի վիճակը միտք բերելով։ Կըկարդանք թէ Աստուած առաջին մարդը իր կողակցին հետ պարտէզի մը մէջ դրաւ, որ անիկա գործեն և պահեն. ուստի թէ որ անմեղութեան վիճակին մէջը աշխատութիւնը հարկաւոր սեպեց նէ մեր ամէնիսմաստ Ստեղծողը, որչափ ևս առաւել մեղանչական վիճակին մէջը հարկաւոր ըլլալու է ան։

Դարձեալ՝ Աստուած մեզի կեանք շնորհեց, բայց անոր պահպանութիւնը մեր աշխատութեանը յանձնեց։ Երկիրը մեր աշխատութեանը փոխարէն մեզ պտուղ կըբերէ։ Ճշմարիտ է ատ. բայց կան ոմանք, որոնք յաջողակութեամբ կամ խելքով իրենց ընկերներուն վրայ տիրապետեցին, և իրենց գործը անոնց ընել կուտան. սակայն թէ որ յաջողակ կամ խելացի մարդը դատարկութեամբ կապրի, ինքը պիտի քաշէ անոր վնասը, և մեկալը իրմէն երջանիկ պիտի ըլլայ։ Այսիկա առանկ է. և թէ որ ան դատարկ կեցողն ալ օգտակար գործի մը չի պատաղի նէ, ինքը բնութեան Տէրոջը օրէնքին դէմ կըհակառակի որ մեզ

օրըստօրէական օգտակար աշխատութեան համար ստեղծեց ։

Ասանկ ալ՝ անասունները և միջատ կեն֊դանիները բնական ազդեցութիւնով կերա֊կուրնին իրենք կըճարեն իրենց անդադար աշխատասիրութեամբը ։ Սողոմոն կըսէ , Աշխատող մարդուն՝ քունը անուշ կուգայ , թէ շատ է կերեր և թէ քիչ ։ և ասիքը չէ թէ միայն քնանալու հանգստութիւնը կընդշանակէ , հապա կընանք խմանալ թէ աշխատութենէ հանգստանալը անանկ ա֊նուշ բերկրութիւն մը կուտայ , որուն նման֊նը բնաւ չէ զգայեր դատարկակեաց անձը ։ քանզի՝ ինչպէս որ կըսվի , “Աշխատութիւ֊նը կանուշցնէ տօն օրը” ։

Ասկից կարելի է հետևցնել՝ թէ էվե֊լօք որդեսէր հայրը ան է՝ որ իր զաւակը կըստիպէ օգտակար գործերու պարապելով անցունել իր ժամանակին մեծ մասը , թէ և որչափ աշխատասէր երևայ ան ։ Նա էվելի խմաստութեամբ կըշարժի ան հայրը՝ որ իր որդին բաւական կարողութիւն ունենալուն պէս անիկա կըստիպէ իր օրական հացը վաստկելու համար բան մը ընել , քան թէ զինքը գործ չունք աշխատի որ մեռած ա֊տենը մեծ ժառանգութիւն մը ձգէ անոր , հազարաւոր օրեր հացալից սեղաններ վայ֊լելու համար ։

Ա՛րդո՞ք վճռով չենք աշխատիր։

Երբոր Ղա Մուհամմետ խան Պարսկաս֊տանի մէջ Հրիւման քաղաքը պաշարեց , Նուֆիթ Ալի խանը ներսէն կրցածին չափ կրպաշտպաններ անիկա ։ Հրաղաքին մէջի բնակիչները երկար ժամանակ ան սոսկալի պաշարմանը մէջ մնալով՝ անօթութենէ ու ծարաւութենէ մեռան , և զօրքերուն իրեք մասին երկուքը կոտրվեցաւ ։ Մինչև ան֊գամ ասոնց յուսահատութեան վիճակը էստի֊պեց Նուֆիթ Ալի խանը որ քաղաքը թշնա֊միին ձեռքը տայ ։ Ալ երջը զօրագլուխնե֊րէն մէկը կաշառք ուտելով թշնամիներուն մէկ քանին քաղաքը խօթեց , որոնք իսկոյն վազեցին դուռներուն մէկը բացին , և պա֊շարողներուն բոլորը ներս առին ։ Նուֆիթ Ալի խան իրեն կողմը եղողներէն քանի մը քաջ մարդիկ իր գլուխը ժողվեց , և իր թշնամիներուն բազմութիւնը ձեղքելով փախաւ դնաց ։ Սակայն իր փախչելուն վը֊րայ շատ չի խնդաց · քանզի շուտով Ղա Մուհամմետ խանին ձեռքը մատնըվեցաւ , որ բարբարոսական անգթութեամբ իր ձեռքովը անոր աչքերը փորեց · և անոր իշխանութեանը վերցըվելը՝ ու Հրիւմանի առնըվելը յիշատակվելու համար , Նուֆիթ Ալի խանին բռնըված տեղը մարդու գլխով աշտարակ մը կայնեցունել մտածեց ։ Ա֊դիտաւորութեամբս վեց հարուր բանտար֊գեալ գլխատեց և անոնց գլուխները իրեք հարիւր ուրիշ բանտարգեալներու ձեռ֊քով ան նոյն տեղը խրկեց՝ ամէն մէկուն եր֊կերկու գլուխ տանել տալով ։ Ա֊ս ողորմելի֊ներն ալ իրենց ընկերներուն վիճակին վի֊ճակվեցան՝ և ամէնուն գլուխները աշտա֊րակաձև շարվեցան ։ 1810ին Ընդլնացի յիսնապետ մը փօթինկէր անունով աս աշ֊տարակը տեսաւ , որ ան յաղթող թշնամիին անողորմ և արեան ծարաւի բնաւորութեանը սոսկալի վկայութիւնն է ։

Ահա ասանկ է պատերազմը · և աշխար֊հիս ո՛ր կողմը պատերազմ որ ըլլայ , ասի֊կա է իր անողորմ և անգութ վախճանը ։ Ա֊րուինը կարող չէ պատերազմին պատճառ ծարաւութիւնը անցունել , · և յաղթու֊թիւնը բաւական չէ անոր անյագ ցանկու֊թիւնը կիշտացունել ։

Անեղանելիան ներում ։

Ան՝ որ հոս մեղանչական կեանք վարելով՝ ասկից եաքը երջանկութեան հասնելու կըյուսայ , կընը֊մանի ան մարդուն՝ որ որոմն կըցանէ , ու իր ամ֊բարները ցորենով կամ գարիով լեցունել կը֊խորհի ։

Ընտրված ապրիլ ։

Ամէն օր՝ ան օրվան գործին ձեռք չի զարկած , առանձին քու գաղտնի աղօթքդ ըրէ ։ Նե֊րէ որ կուզես քու միտքդ խաղաղ և հանգիստ պահել քու գործերուդ մէջ՝ պէտք է որ աղօթքէն գոր֊ծի երթաս քան թէ գործէն աղօթքի · քանզի թէ որ առտվանց աշխարհս քու սիրտդ մտնայ , հաղիւ կըլայ որ բոլոր օրը Աստուած հոն մտնա֊լու տեղ ունենայ ։

Անծամծ հարստութիւններ մի՛ փնտրեր , հապա անանկը՝ որ կրնաս արդարութեամբ ստա֊նալ , չափաւորութեամբ գործածել , ուրախու֊թեամբ ցրուել , և գոհ սրտով ձգել երթալ ։

Յովհաննէս Պլընիանին երթալը։
Մաս I։

Յովհաննէս Պլընիան երևելի Ընդհանուր կրօնաւորը ծնաւ յամի Տեառն 1628։ Իր ծնողքները թէպէտ և աղքատ էին՝ ուզեցին որ աղէկ մը կրթել տան զինքը, բայց ինքը անառակութեան հետևելով ամենաչար պատանի մը եղաւ։ Ի վերջ Աստուծոյ օրհնութեամբը իր գէշ վարքը փոխելով՝ ինքզինքը ուսման տուաւ, և այնչափ յառաջացաւ՝ որ մինչև կրօնաւորութեան աստիճանի հասաւ և շատ օգտակար գիրքերու հեղինակ եղաւ։ Իր ժամանակը հալածանքի ատեն ըլլալուն բանտը դրվեցաւ, և տասներկու տարի բանտարգել մնաց։ Ինչ նոյն վիճակին մէջը գրեց իր հռչակաւոր գիրքը՝ երազի ձևով. և անանկ ըլլալը իմացունելու համար՝ աշխարհս անապատի մը կրնմանեցունէ, ուր իր բանտը քարայրի նմանը մը։ Ինքը իր գիրքը կկոչէ Յառաջընթացութիւն Ա՛նապարհորդի, մենք պարզապես Յովհաննէս Պլընիանին ՝ըրածը կոչեցինք ան՝ որ սանակ կըսկսէ։

Աշխարհիս անապատին անցած ատենս մէկ տեղ մը հասայ՝ ուր որ քարայր մը կար, և ան քարայրին մէջը պառկեցայ քնանալու, ու քնացած տեղս երազ մը տեսայ։ Ներաղիս մէջը մէկը տեսայ՝ որ հինուն լաթեր հագած մէկ տեղ մը կայներ էր, երեսը իր տունէն դարձուցեր էր, ձեռքը գիրք մը ուներ ու կռնակը մեծ բեռ մը*։ Ետքմամբ տեսայ որ գիրքը բացաւ ու սկսեց կարդալ։ Կարդացած ատենը կուլար ու կըդողար մարդը, և չի կրնալով էվէրլի ինքզինքը բռնել՝ ողբալի աղաղակ մը փրցուց՝ ըսելով, «Ո՞նչ պիտի ընեմ ես» †։

Ան վիճակին մէջը մարդը իր տունը դընաց, և կրցածին չափ ինքզինքը զսպեց որ իր կինը և զաւկրները իր նեղութիւնը չիմանան. սակայն երկան ատեն լուռ մնալու չի կրցաւ, ինչու որ իր նեղութիւնը կէվէրնար։ Ուստի վերջապէս իր միտքը իր կնկանը և զաւկրներուն բացաւ, և սանակ սկսեց խօսիլ անոնց։ «Ով իմ սիրելի կիներս, և դուք՝ ով իմ որովայնիս զաւկրները, ես՝ ձեր բարեկամը, իմ վրաս ծանրըցած բեռի մը պատճառովը կործանած եմ։ Ետքմամբ ստոյգ իմացած եմ՝ որ աս մեր քաղաքը երկինքէն իջած կրակով պիտի էրվի. և անոր սոսկալի կործանմանը՝ ես՝ և դուն իմ կինս՝ և իմ անուշ զաւկրներս, Թշուառաբար պիտի կորսըվինք. միայն թէ կարելի է որ փախչելու ճամբայ մը գտնըվի, (որոր դեռ ես չեմ գիտեր,) որով կարող ըլլանք աղատիլ»։ Ու խօսքին վրայ իր ընտանիքը մեծապես զարմացան՝ չէ թէ անոր զրուցած խօսքերուն ճշմարտութեանը հաւատալով, հապա կարծելով թէ իր մըտքին այլայլութիւն մը եկած է։ Ուստի գիշերը մօտ ըլլալուն՝ և իրենք ալ յուսալով որ քունը իր միտքը կըհանդարտեի, արտօրալով զինքը անկողինը դրին։ Նայց գիշերն ալ յորեկին պէս վշտալի էր իրեն. անոր համար քնանալուն տեղը՝ հառաչանքով ու արցունքով անցուց անիկա։ Ետանկ՝ երբոր առտու եղաւ, ընտանիքը ուզեցին գիտնալ թէ ինչուր էր։ Ինքը պատասխան տըւաւ անոնց թէ, «Կ՛ուշին գիշը»· ու նստաւ նոքեն անոնց հետը խօսելու, բայց անոնք սկըսեցին ականջ չի կախել իրեն։ Նաև մտածեցին որ իրեն չէխ տալով և խոժոռելով՝ իր մտքին հիւանդութիւնը մէկղի ընեն. երբեմն զինքը կընախատէին, երբեմն կըչէխէին, և երբեմն բոլորովին զինքը կըձգէին։ Ուստի սկըսեց առանձին իր սենեակը մտնալ անոնց համար աղօթք ընելու և անոնք կսկըծալու, ու նաև իր թշուառութիւնները ողբալու. ասկից՝ ի զատ առանձին զաշտերուն մէջը կերթայ կըպատրաստէր՝ երբեմն կարդալով և երբեմն աղօթելով, և քանի մը օր իր ժամանակը ասանկ անցուց։

Ետքմամբ տեսայ որ զաշտերուն մէջ պըտըտած ատենը՝ (իր սովորութեանը պէս) ձեռքին գիրքը կրկարդարկոր, և իր միտքը մեծ նեղութեան մէջ էր. ու կարդացած տեղը աչքին արցունքը փլչելով՝ ինչպէս որ առաջ եղեր էր, սկսեց կանչել. «Ո՞նչ պիտի ընեմ ես որ փրկըվիմ»*։

Նաև տեսայ որ մէկ կողմը ու մէկալ կողմը կընայէր, որպէս թէ փախչիլ ուզելով. և սակայն հանդարտ կայներ էր, ինչու որ՝ (ինչպէս ես կարծեցի,) չէր գիտեր թէ ո՛ր կողմը երթայ։ Ետքմամբ նայեցայ՝

*Լուսա. կդ. 6։ Գործ. ԺԶ. 33։ Սաղմ. ԼԸ. 4։
†Գործ. ը. 37։ ԺԶ. 30։ Ղբաւ. ա. 2, 3։

7 * բ

*Գործ. ԺԶ. 30, 31։

ու տեսայ որ մեկը կուգարկէր դէպի իրեն՝ անունը Լեւտարանիէ, և ըսաւ. «Ինչու համար կուգաս կողքակոր դուն»։

Պատասխան տըւաւ մարդը. «Տէր, ես իմ ձեռքիս դիրքէն կիմանամ որ պիտի մեռնիմ, ու անկէ ետև դատաստան պիտի երթամ*. և կըգտնամ որ առջինը ընելու կամք չունիմ†, ու երկրորդը ընելու կարողութիւն չունիմ» ‡։

Ինծառն Լեւտարանիէը ըսաւ. «Ինչու համար կամք չունիս մեռնելու, որովհետև ասանկ կեանքս այսչափ չարիքներով լեցուն է»։ Պատասխան տըւաւ մարդը. «Ինծի համար որ կըվախնամ թէ ասիկա իմ կռնակիս բեռը զերեզմանէն ալ խորունկ տեղ մը դիս իջեցունէ, ու ես խորունկ ձորին մէջը իյնամ§։ Ան թէ որ՝ Տէր իմ, ես յարմարութիւն չունենամ բանտը երթալու, դատաստանի՝ և անկից դատապարտութեան ալ երթալու յարմարութիւն չեմ ունենար. և ահա ասանկ բաներուն մտմտուքները դիս կըլացունեն»։

«Թէ որ քու վիճակդ ասանկ է նէ, ըսաւ Լեւտարանիէը, ինչու համար հանդարտ կեցեր ես»։ Պատասխան տըւաւ մարդը. «Ինծի համար, որ չեմ գիտեր թէ ուր երթամ»։ Ինծառնը միւսը ոլորած մագաղաթ մը տըւաւ իրեն, որուն մէջը գրուած էր՝ «Գալու բարկութենէն փախիլը»‖։

Ապա՝ մարդը կարդաց անիկա, և զգուշութեամբ Լեւտարանիէին վրայ նայելով՝ ըսաւ. «Ո՞ւր փախչելու եմ»։ Լեւտարանիէը իր մատովը մէկ մեծ դաշտի մը միւս կողմը ցուցընելով, ըսաւ. «Կըտեսնամ կոր անտեղի նեղ դուռը»**։ Մարդը ըսաւ. «Գէ»։ Ինծառնը միւսը ըսաւ. «Կը տեսնամ կոր անտեղի վառած ճրագը»††։ Ըսաւ. «Կարծեմ թէ կըտեսնամ կոր»։ Լեւտարանիէը ըսաւ. «Ընդդ ատ ճրագին վրայ պահէ, ու շիտակ դէպի անոր գնա, և պիտի տեսնաս ան դուռը. հոն՝ երբոր ատ նեղկա չլաս, քեզի պիտի ըսուածվի թէ ինչ պիտի ընես»։ Ասանկ՝ երազին մէջը տեսայ որ մարդը սկըսաւ վազել։ Վասն որ

*Լուկ. ԺԶ. 27։ †Յովէլ. Ժ. 21, 22։ ‡Ղեւտ. ԻԶ. 14։ §Նայայ. Շ. 33։ ‖ Առակ. Ջ. 7։ **Առակ. Է. 13. 14։ ††Սաղմ. ՃԺԹ. 105։ Է. Պետր. Ա. 19։

ինքը շատ չի հեռացած իր տունէն՝ կնիկը և զաւկընեըը բանը իմանալով սկսեցին իր եւսէն կանչել որ դառնայ։ Նայց մարդը մատերը ականջներուն դրաւ՝ և առաջ կըվազէր ըսելով. «Կեանք, կեանք, յաւիտենական կեանք»*։ Ասանկ ինքը եւին չի նայեցաւ†, հապա վազեց գնայ դէպի դաշտին մէջ տեղը։

Դրացիները ևս դուրս ելան իր վազելը տեսնալու‡. և ինքը որ կըվազէր, ոմանք ծաղր կընէին, ուրիշները իրեն կըսպասնային, և ոմանք եւսէն կըկանչէին որ դառնայ։ Ան ատանկ ընողներուն մէջը երկու հոգի կային, որոնք վճռեցին երթալ բըռնութեամբ ետ բերել զինքը։ Անկին ան նունը պինտզլուխ էր, և մեկալինը Խօսքի պատկող։ Ըրդ՝ մարդը մինչև հիմայ աղեկ մը հեռացեր էր անոնցմէ, բայց ասկայն անոնք մեռքերնին դրեր էին իր եւսէն իյնալ, և ասանկ ընելով քիչ առեներն մէջը իրեն հասան։ Ինծառն մարդը ըսաւ. «Դրացիներ, ինչու համար եկաք»։ Պատասխան տըւին թէ, «Ինծի համար որ քեզ ետ դառնալու համոզենք»։ Նայց ան ըսաւ. «Ուրիկա անհնար է ըլլալ. դուք կըբնակիք Կորճանման քաղաքը, ուր որ ես ալ ծներ եմ։ Ան կըտեսնամ որ անիկա ասանկ քաղաք մըն է. և կանուխ կամ ուշ հոն մեռնելով՝ զերեզմանէն ալ խորունկ տեղ մը պիտի իջնաք որ կրսակով ու ծծումբով կերըի. ուստի խօսքս բանեցէք՝ ոմն իմ բարի ղրացիներս, և դուք իմ հետս եկէք»։

Պինտզլուխ, Ինչ, ըսաւ պինտզլուխը, մեր բալուկամներըը ու բարիքները եւնիս ձգենք հա։

Խրիսթիանոս, Այո, ըսաւ Խրիսթիանոս, (քանդի ան էր մարդուն անունը.) ինչու որ ան ձեր բոլոր ձգած բաներըը իմ վայելելու համար խնդրած բաներուս պինտ պզտիկին հետը բաղդատվելու արժանի չեն§։ Ան թէ որ դուք իմ հետս երթաք՝ և անկիս ըսածնաք, դուք ալ իմ վայելչութեանս մասնակից պիտի ըլլաք. քանդի հոն՝ ուր որ ես կերթամ, բաւական կայ և կեվճնայ

*Գաղ. ԺԴ. 26։ †Ծննդ. ԺԹ. 17։ ‡Ղեւտ. Ի. 10։ §Բ. Կորնթ. Դ. 18։

ալ * ։ Նկէք իմ հետս , և իմ խօսքս փորձեցէք ,

Պինոփլօ֊ի ։ Ո՛ւր վնտռուած բաներդ ի՞նչ են , որ անոնք գտնալու համար բոլոր աշխարհը կըձգեսկոր ։

Վրէնոփոնոս ։ Այս անապակեան՝ անարատ՝ և անթառամ ժառանգութիւն մը կըվնտռուի † , որուն երկինքը գանձըված է և հոն ապահով կըկենայ ‡ , որ սահմանված ատենը անկիւս ջանքով խնդրողներուն տըվի ։ Նէ որ կուզես՝ իմ գրքիս մէջը անկիւս կարդա և իմացիր որ ատանկ է ։

Պինոփլօ֊ի ։ Ա՛յ՛ , ըսաւ Պինոգլուխը , մէկդի գնա քու գրքիդ հետը ։ Մեր հետը ետ պիտի դառնաս թէ չէ ։

Վրէնոփոնոս ։ Չէ՛ , ես չի պիտի դառնամ , պատասխանեց մարդը , ինչու որ ես ձեռքս մաձին վրայ դրի § ։

Պինոփլօ֊ի ։ Նկոր ուրեմն՝ Խօսքիպատկոդ դրացին , դառնանք մեր քնակարանը երթանք առանց ասոր ։ Ասոր պէս հիւանդամիտ խելագարներու ընկերութիւն մը կայ , որ երբ այլանդակ բանի մը ծարը փակչին նէ , մեկ բանին պատճառները ցուցընող եօթը հոգիին էվելը խմաստուն են իրենց աչքին առջևը ։

Խօսքիպատկոդ ։ Ընդունելով մի՛ խօսիր , ըսաւ Խօսքիպատկոդը ։ Թէ որ բարի Վրըբիստիանոսին ըսածը ճշմարիտ է նէ , իր վնտռած բաները մերիններէն աղէկ են ։ Իմ սիրտս կըհակիկոր որ իմ դրացինիս հետը երթամ ։

Պինոփլօ֊ի ։ Ի՛նչ , ամէն քեզի խելագար մըն ալ ։ Իմ խօսքս մտիկ ըրէ , ու ետ դարձիր ։ Ով գիտէ թէ ասոր պէս խելագարը քեզ ուր պիտի տանի ։ Նո դարձիր , ետ դարձիր , ու խելացի եղիր ։

Վրէնոփոնոս ։ Իմ հետս եկոր՝ Խօսքիպատկոդ դրացին , անանկ բաներ կան ստանալու որոնց վրայով խօսեցայ , և անոնցմէ՛ի զատ շատ ուրիշ փառաւոր բաներ ալ ։ Նէ որ ինձի չես հաւատար , ատ գրքին մէջը կարդա ։ ԵՒ ասոր մէջն գրված բոլոր բաները ճշմարտութիւնը ահա ասիկա շինողին արունովը հաստատված է * ։

Խօսքիպատկոդ ։ Ուրեմն՝ Պինոգլուխ դրացին , ըսաւ Խօսքիպատկոդը , ես հիմայ միտքս պիտի որոշեմ ։ Ես կըխորհիմ աս բաները մարդուն հետ երթալ , և իմ վիճակս անոր վիճակին հետ ձգել ։ Բայց՝ ով իմ բարի ընկերս , աս բաղձալի տեղը երթալու ճամբան գիտե՞ս մի ։

Վրէնոփոնոս ։ Ըստ ատենիս անունով մեկը ինձի ցուցուց որ արտորալով ան նեղ դուռը երթամ՝ որնոր մեր առջևն է ։ Հոն ճամբուն վրայով պիտի տեղեկանանք ։

Խօսքիպատկոդ ։ Նկոր ուրեմն երթանք՝ բարի դրացինս , ըսաւ մարդը , և երկուքը մեկեն ճամբայ ելան ։

Պինոփլօ֊ի ։ Նա ալ ետ կերթամ իմ տեղս , ըսաւ Պինոգլուխը ։ Ես ատանկ ծուռ ճամբայ գացող խելագար մարդոց հետը ընկերութիւն չեմ ըներ ։

Հիմայ երազիս մէջը տեսայ՝ որ երբ Պինոգլուխը ետ դարձաւ , Վրէնոփոնոսը ու Խօսքիպատկոդը դաշտին վրայէն խօսակցելով կերթայինկոր , և իրենց խօսակցութիւնը ատանկ սկսեցին ։

Վրէնոփոնոս ։ Նկոր նայինք , Խօսքիպատկոդ դրացին , ինչպէս ես ։ Ուրախ եմ որ խելքդ պատկեցաւ իմ հետս երթալու ։ Նէ որ Պինոգլուխը ան դեռ չի տեսնըված բաներուն վախը ու զօրութիւնը ինձի պէս զգացած ըլլար նէ , ատանկ դիւրութեամբ մեզ չէր ձգեր դառնալ ։

Խօսքիպատկոդ ։ Նկոր , Վրէնոփոնոս դրացին , որովհետև երկուքէս ուրիշը չի կայ հոս , ըսէ ինձի թէ մեր երթալու տեղը ինչ բաներ կան , և ինչպէս պիտի վայելենք անոնք ։

Վրէնոփոնոս ։ Այս չեմ կրնար այնչափ իմ լեզուովս անոնց վրայ խօսիլ , որչափ որ մտօքս կիմանամ ։ Բայց որովհետև կըփափաքիսկոր գիտնալու , իմ գրքիս մէջը կարդամ անոնց վրայով ։

Խօսքիպատկոդ ։ Այ՛ , կըկարծե՞ս թէ քու գրքիդ խօսքերը անտարակոյս ճշմարիտ են ։

Վրէնոփոնոս ։ Այ՛ , անշուշտ ։ քանզի աս գիրքը շինողը ամենևին չի կրնար սուտ խօսիլ † ։

---

*Ղուկ ։ ԻԵ ։ 17։ †Ա ։ Պետր ։ Ա ։ 4։ ‡Նէեր ։ ԺԱ ։ 16։ §Ղուկ ։ Ի ։ 62 ։

*Նէեր ։ Ի ։ 17, 21 ։ † Տիոթ ։ Ա ։ 2 ։

Յօհաննէս· Պինտ աղեկ· ինչ են ան քաները։

Վրխոսխանոս· Մէկ անվախճան թագաւորութիւն մը կայ ժառանգելու, և յաւիտենական կեանք մը մեզի տրվելու՝ որ յաւիտեան ան թագաւորութեան մէջը քնալ կինք *։

Յօհաննէս· Պինտ աղեկ· ուրիշ ի՞նչ կայ։

Վրխոսխանոս· Փառաց թագեր կան մեզի տրվելու, և անանկ հանդերձներ որ մեզ երկնից արեգակին պէս պիտի փայլեցուցնեն †։

Յօհաննէս· Այ ըսածդ պատուական բան է· և ուրիշ ի՞նչ կայ։

Վրխոսխանոս· Չէն ոչ լաց և ոչ տրտմութիւն պիտի ըլլայ· քանզի ան տեղին Տէրը մեր աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ ‡։

Յօհաննէս· Ա՛խ ի՞նչ ընկերներ պիտի ունենանք հոն։

Վրխոսխանոս· Չէն սերովբէներուն և քերովբէներուն հետը պիտի բնակինք մենք §, որոնք անանկ ստեղծուածներ են՝ որ քու աչքերդ պիտի խտտըղին երենց վրայ նայելու։ Չէն նաև պիտի տեսնես հաղարաւոր և բիւրաւոր անձինք որ մեզմէ առաջ ան տեղը գացին· ասոնցմէ մեկը վնասակար չէ, հապա բոլորն ալ սիրելի և սուրբ են· ամէն մեկը Աստուծոյ դէմը կրպտըտի, և իր առջևը կրկայնի, յաւիտեան երեն հաճելի ըլլալով։ Մէկ խօսքով, հոն պիտի տեսնանք երեցները երենց ոսկեղէն պսակներովը ||, հոն պիտի տեսնանք սուրբ կոյսերը երենց ոսկի քնարներովը **, հոն պիտի տեսնանք ան մարդիկը՝ որոնք ան տեղին Տէրոջը վրայ ունեցած սէրերնուն համար աշխարհիս ձեռօքը կտոր կտոր ըլորդըվեցան, բոցերուն մէջը երեցան, գազաններէն կերվեցան, ծովերուն մէջը խեղդըվեցան· ամենը աղեկ, և անմահութիւնը իրենց հանդերձ վրանին հագած են††։

Յօհաննէս· Այ քաներուն լսելը ան զամ բաւական է մեկուն սիրտը զմայլեցնելու։ Հայդ ասոնք պիտի վայլըվի՞ն մի։ Ինտոր մենք պիտի ժառանգենք անոնք։

Վրխոսխանոս· Տէրը, ան քաղաքին կառավարը, աս գրքին մէջը պատմեց ան *· որուն բովանդակութիւնը աս է՝ որ եթէ մենք ճշմարտապէս անոնք ուզելու ըլլանք նէ, ինքը ձրի պիտի տայ մեզի։

Յօհաննէս· Այ ալ աղեկ՝ իմ բարի ընկերս, ուրախ եմ ասանկ քաները լսելու· առաջ եկող, քայլերնիս շուտով առնենք։

Վրխոսխանոս· Այ իմ կռնակիս բեռին պատճառովը ուզածիս չափ շուտով չեմ կրնար երթալ։

Այս միջոցին երազիս մէջը տեսայ՝ որ իրենց աս խօսքը լըմընցուցածնուն պէս, դաշտին մէջերը տղմալից փոսի մը հասան· և զգուշութիւն չընելնին երկուքը մէկէն ան ցեղին մէջը ինկան։ Ան փոսին անունն էր Յուսահատութիւն։ Ասոնք առեն մը Թագաւորտեցան հոն, և վրանին բոլորովին տիղմով շաղախեցաւ· ու Վրխոսխանոսը իր կռնակի բեռին պատճառովը սկսեց ընկղմիլ տիղմին մէջը։

Յօհաննէս· Ա՛հ, Վրխոսխանոս դրացին, ո՞ւր ես դուն հիմայ։

Վրխոսխանոս· Իրաւ որ ես ալ չեմ գիտեր, պատասխան տըւաւ մարդը։

Անոր վրայ Յօհաննէս նեղացաւ, և բարկանալով իր ընկերին ըսաւ։ "Ա՛ս է ալ ան երջանկութիւնը որուն վրայով այսչափ առեն ինծի կըխօսէիրկոր։ Ա՛խ որ մեր առջև ճամբայ ելլալը ասանկ ձախորդ է նէ, ի՞նչ քաներու յուսալու ենք մինչև մեր ճամբուն վերջը։ Ա՞ւր էր որ կեանքս չի կորսընցուցած մէյմը դուրս ելլայի։ իմ տեղս դուն ժառանգէ ան պատուական երկիրը"։ Այս ըսելով բոլոր զօրութիւնովը մեկ երկու անգամ Յանք ըրաւ, և տիղմին մէջէն դուրս ելաւ՝ փոսին ան կողմը որ իր տանը մօտ էր· այսպէս առաւ քալեց, և Վրխոսխանոսը մէյմալ ղենքը չի տեսաւ։

Վրխոսխանոս Յուսահատութեան փոսին մէջը Թաղըլըրկելու մինակ մնաց· բայց տակաւին կըջանար և կաշխատեր փոսին ան

*Լսայ. խե. 17։ Յհ. Ժ. 27, 29։ †. ը. Տես. գ. 8։ Յայտ. իգ. 5։ Սաղմ. ժգ. 43։ ‡ Լսայ. իե. 8։ Յայտ. է. 16, 17։ իա. 4։ § Լսայ. չ. 2։ ա. Կորնթ. գ. 16, 17։ Յայտ. ե. 11։ ||Յայտ. դ. 4։ **Յայտ. ժգ. 1, 5։ †† բ. Կորնթ. ե. 2, 3, 5։

*Լսայ. ծե. 1, 2։ Յհ. չ. 37։ ը. 37։ Յայտ. իգ. 6, 17։

կողմը երթալ՝ որ տունէն հեռու և ան նեղ դռանը մօտ կէյնար ։ Ինչև իցէ աս բանս ըրաւ , բայց կռնակի բեռին պատճառովը չէ կրցաւ տիղմին մէջէն դուրս ելլալ ։ Ա՛ս մի ջոգիս երազիս մէջը տեսայ որ մէկը եկաւ իրեն՝ Աղնեական անունով , ու հարցուց իրեն թէ ինչ կրնէկրօր հոն ։

Ադիսպիանոս · Տէր իմ , ըսաւ Ադրիստիանոսը , Ըէհեսարանիէ անունով մէկը ինծի հրամայեց որ աս ճամբան երթամ , ու նաև ան տեղէն նեղ դուռը երթալու շիտակէց գնա , որպէս զի զալու բարկութենէն փախչելու կարող ըլլամ ։ Ա՛ս ալ՝ որ դէպի հոն կերթայիկոր , աս տեղը ինկայ ։

Աղնեական · Բայց ինչո՞ւ համար ուրիշ դռնելու տեղերը չէ նկատեցիր ։

Ադիսպիանոս · Ա՛խ ես անանկ կրհալածեր կոր գիս , որ մօտ ճամբէն երթալու համար մէջը ինկայ ։

Աղնեական · Ձեռքդ ինծի տուր , ըսաւ Աղնեականը · ուստի ձեռքը անոր տըւաւ , և ան գինքը դուրս քաշեց , ու հաստատուն երկրի վրայ դրաւ անիկա , և հրաման ըրաւ որ իր ճամբան երթայ * ։

Ընատենը ես Ադրիստիանոսը տիղմէն հանողին քովը գայի և ըսի · « Տէր իմ , ո՞ րովհետև Կործանման քաղաքէն ան նեղ դուռը երթալու ճամբան աս տեղէն կանցնի , ինչո՞ւ համար աս տեղը չի շինվիր , որ խղճալի ճամբորդները ապահովութեամբ երթան հոն » ։ Ան ինքը ինծի պատասխան տըւաւ թէ , « Ա՛ս տղմալից փոսը անանկ տեղ մըն է որ չի կրնար շինվիլ ։ Ընչիկա ցած տեղ մըն է , ու մեղաւորին ինքըզինքը պարտաւոր ճանչնալէն առաջ եկած փըր֊փուրը և աղտեղութիւնը միշտ հոս կրվազէ · և անոր համար կրկոչվի Յուսահատութեան փոս ։ Ադանդի թէ և մեղաւորը իր կորսըված վիճակը իմանալով արթընցայ ալ նէ , իր սրտին մէջը շատ վախեր և երկբայութիւններ , ու զարհուրելի մտածմութիւններ կրծնանին , որոնց ամէնը մէկ կրլլան և աս տեղս կուգան կրլլենան · և ա֊հա աս տեղին ասանկ գէշ ըլլալուն պատճառը աս է ։ Թագաւորը հաճութիւն չունի որ աս տեղը գէշ մնայ † ։ Իր գործակալները ևս իր տէրութեանը կառավարներուն կարգադրութիւնովը հազար վեց հարուր տարիէն հետէ աս տեղիս վրայ աշխատեցան , որ ըլլայ թէ անկից շտկեն նորոգեն ։ Ես իմ գիտցածիս նայելով՝ աս տեղս քանի հազար , մանաւանդ թէ միլիոնաւոր սայլ բեռ առողջարար դեղեր կրլլեց , որ Թագաւորին սահմաններուն ամէն կողմերէն ա֊մէն տեսեն բերվեցան , (և անոնք որ ասիկա գիտեն՝ կրսեն թէ , պինտ աղեկ նիւթեր են անոնք գետինը ամրացունելու աղեկցունելու ,) որ ըլլայ թէ աս տեղս շինվի · , բայց դեռ ասիկա Յուսահատութեան փոս է , և ինչ որ ընեն նէ նոյնպէս պիտի մնայ ։

« Ձշմարիտ է՝ որ Աղենսդիրին հրամանովը մինչև անգամ տիղմին մէջ տեղը քա֊նի մը աղեկ և հաստատուն աստիճաններ կան ոտք դնելու · բայց անանկ տեւեններըր՝ որ աս տեղս իր աղտեղութիւնը էվէլօք կը֊փսխէ , աս աստիճանները հաղիւ թէ կը֊տեսնըվին · կամ թէ որ տեսնըվին ալ նէ՝ մարդիկ երենց գլխուն դառնալովը քովանց կրկոխեն , ու անանկ՝ դիտնալով տիղմին մէջը կրկոխան , թէպէտ և աստիճանները հոն են · սակայն անգամ մը դուրը որ հանին , ալ դեռինը աղեկ է՝ » * ։

Ընոր վրայ երազիս մէջը տեսայ որ հիմայ Խօսքիպատուհողը իր տունը հասաւ ։ Ուստի իր զրայիններըը եկան զինքը տես֊նալու , որոնցմէ ոմանք զինքը խելացի կը֊կոչէին ետ դառնալուն համար , և ոմանք յի֊մար կրկոչէին Ադրիստիանոսին հետ գինքը վտանգի մէջ ձգելուն համար ։ Ուրիշներն ալ իր վախկոտութեանը համար վրան կը֊խնդային ըսելով ։ « Ընատարակոյս՝ ասանկ քանի մը սկրսեցին ետքը , ես չէի կամեր այնչափ տկար երևալ քանի մը դժուարու֊թիւններու համար » ։ Ընայեցա՝ Խօսքիպատ֊հողը ամէնալով անոնց մէջը նստաւ · բայց վերջը քիչ մը համարձակութիւն առաւ , ու ետքը ամէնը մէկէն երենց զրոյցը դար֊ձուցին , ու սկրսեցին Ադրիստիանոսին ետևէն գինքը նախատել ։ Ան այսչափ հե֊րիք ըլլայ Խօսքիպատհողին վրայով ։

* Սաղ · ղԼ . 2 ։ † Նոյն · ղԵ . 3 , 4 ։

* Ա . Կոր . ժԱ . 23 ։

Լահոռ, և Ռոնձիթ Սինկ Լահոռի նախագահին վերայ։

Ասիայի ընդարձակ սահմանին մէջ Ընդհանուր Հնդկաստանին և Պարսկաստանի մէջ տեղը երեսուն աստիճանէն եվեր հիւսիսային լայնութեան տակը երկիր մը կայ՝ որ Թէպէտ ընդարձակ և հարուստ տեղ է՝ ու աշխատասէր բնակիչներ ունի, բայց իր վրայովը մեր կողմի բնակիչները քիչ ծանօթութիւն ունին։ Երկրին ձևը ուռանկիւնի է, Ինդոս և Սութլէճ գետերուն երարու միանալովը. իր հիւսիսային կողմը կկինա Հիմալայա լեռներուն մէկ մասը. բնակիչները պատերազմասէր և յանդուգն մարդիկ են, և երկիրը կկոչվի Լահոռ, կամ տէրութիւն Լահոռի։

Քառասուն տարիի չափ առաջ Լահոռի երկիրը առանձին թագաւորութիւն մը չէր։ Բանի մը իրարմէ անկախ անպետան դուքսեր կըտիրապետէին ասոր զեղեցիկ երկրին զանազան մասերուն վրայ, և յափշտակութեամբ ու բռնաւորութեամբ կապրէին։ Ընդհարար իրարու հետ կըպատերազմէին, և հանապազ յաղթելով ու յաղթվելով՝ ոչ օգտակար արհեստներու սկըսել և ոչ անոնք յառաջացունելու ատեն ունէին ասոնց մասին պատերազմներուն սարսափին մէջը։ Ասոնի ասոր արդաւանդ երկիրը որ երկա մեծ թագաւորութիւններու մէջը կինայ՝ խիստ ընդարձակ ցամաք երկրի մը մէջ տեղը, բազմաթիւ նաւահանգիստներով և բնական սահմանագլուխներով ուրիշ երկիրներէն զատված, ներքին երկաւտակութիւններով կտոր կտոր եղեր էր, և ամէն քաղաքական բարեկարգութիւններէ զուրկ էր. Ճշմարիտը խօսելով՝ ինքնիշխան տէր մը թագաւոր մը կուզեր, որ բոլոր երկիրը իր իշխանութեանը տակ առնելով անիկա կառավարէր։

Սակայն հիմայ ասի երկիրը թագաւոր մը ունի, որ անոր բոլոր բաժնված մասերը միացունելով մէկ տէրութիւն մը ըրաւ անիկա։ Ան երկիրը հիմայ քսան միլիոնի չափ բնակիչով թագաւորութիւն մըն է. ունի աղէկ վարժված զինուորներու գունդեր, ձուլարաններ և զէնք պահելու տուներ, կանոնաւոր կառավարութիւն, առատ կամուրջ. և բուն երկիրը այնչափ օգտակար կարութիւն ունի՝ որ Հնդկաստանի Ընդհանուր կառավարութեանը բարեկամ և դաշնակից է։

Ան տէրութիւնը երկու երեսէն մարդոց ձեռքովը իր հիմակվան հարստութեանը և զօրութեանը հասաւ։ Ասոնց մեկը Ռոնձիթ Սինկ Լահոռի և Քաշմիրի կամ Քիշմիրի Թագաւորն է, որ բոլոր ան առջի անպետան դուքսերը յաղթելով իր իշխանութեանը տակը առաւ երկիրը. և միւսը Ընդհարդ անունով Գաղղիացի մըն է, որ առաջ Նաբոլէոնին զօրքերուն մէջը երեսէն զօրաճակատ մըն էր, և հիմայ Ռոնձիթ Սինկ Թագաւորին զօրքերուն գլխաւոր հրամանատարը կամ զօրապետն է։

Չորս տարիէ չափ առաջ Ընդհարդ զօրագլուխը Գաղղիա գնաց իր հայրենիքը տեսնալու, իր հետը տանելով երեք Լահոռցի կնիկը և զաւկները։ Իր դիտաւորութիւնը էր՝ զաւկները վարժապետնեբու քով դնել՝ որ իրենց հօրը հաւատքը սորվին, և Եւրոպայի քաղաքավարեալ երկիրներուն սովորութիւններովը վարժվին։ Երբոր ինքը փարիզ քաղաքն էր՝ տը պագրիչէ մը հետը տեսնվելով իր պատմութիւնը անոր ըրաւ, և ան ալ աս հետևեալ կերպովը նոթալոյց Թուղթին մէջ տը պագրելով հասարակութեան հրատարակեց այսպէս։

Ընդհարդ զօրագլուխը չիսուն տարեկանի չափ է, միջակ հասակով և զեղեցիկ կերպարանքով. իր դէմքին վրայ հեղութիւն մը կերևայ հանդերձ վսեմութեամբ. իր խօսքը կարճ է և պարզ, իր ձայնը եղանակաւոր, և իր խօսակցութիւնը համեստ։ Ծօրութը և պեխերը ճերմակ են և երկան. գլխուն մազերը գորշ են, բայց բոլոր իր արտաքին երևոյթը երիտասարդական աշխոյժ մը կըցուցընէ։ Ընչքերը պայծառ են և սուր, ինքը զինուորական գործքերու մէջ ղբաղեալ է, և կրթըւի Թէ իշխանութեան մէջ ըլլալու համար ծնած է։

Ան զօրագլուխը առաջ Նաբոլէոնին զօրքերուն մէջն էր՝ ինչպէս որ ըսինք, բայց Նաբոլէոնին կնալուն Ցրանապայէն եկաւ Ամերիկայի միացեալ նահանգները երթալու համար, և իր նաւը բռնած պատահաստ էր, որատեն Իտալացի զօրականի մը

պատահեցաւ, որ իրեն պէս ան ալ իր բաղդը օտար երկրի մը մէջ փնտռելու կերթարկոր. և համոզեց ասիկա որ Ամերիկա երթալէն ետ կենայ ու իրեն հետ Նդիպատոս երթայ։ Համոզեցաւ Ալարդ և զնացին Նդիպատոս. բայց բդեշխը ոչ մարդասիրաբար ընդունեց զինքը և ոչ գործի մը վրայ դրաւ։ Ասոր ձգեց Պարսկաստան զնաց. և Սպահանի մէջ Աբբաս Միրզան սիրով զինքը ընդունեց, ու հաղալապետութեան պատիւ տրաւ իրեն. խոստացաւ որ դունդ մը զօրք տայ իրեն, բայց իր խոստմունքը չի կրցաւ կատարել։ Այս առենս Ալարդին բաղդաւորութեամբը Թագաւորին պալատը Ղազուլհստանի ծեր Թագաւոր մը կար՝ որուն եղբայրը Թագաւորական աթոռը իր ձեռքէն առեր և իր աչքերը կուրցուցեր էր։ Այս Թագաւորը ծեր և փորձառու մարդ մըն էր, և լսաւ Ալարդին որ եթէ Ղազուլհստան երթայ, անշուշտ ընդունելի կըլլայ և գործ կըգտնայ հոն։ Ղազուլհստան Պարսկաստանի և Ղազմիրի մէջ տեղը կիյնայ։ Ալարդ գնաց, և հոն իր օրք մէկ նոր Թագաւոր մը գտաւ որ աղէկ դիտեր Եւրոպացի զօրականի մը արժէքը։ Հայր երբոր հոս տեղը պիտի հաստատուէր, խմացաւ որ երկու հարիւր փարասխ հեռուն մէկ ձարպիկ և քաջ իշխան մը կըբնակի, որ իր բոլոր զօրութիւնովը Թագաւորուն Թիւն մը հաստատել կըջանակոր։ Ահա Ալարդ ալ ասանկ տէրոջ մը ծառայել կուզէր. ուստի ելաւ Յահուռ գնաց և Նունճիթ Սինկը գտաւ։ Նունճիթ Սինկ մարդասիրաբար ընդունեց զինքը. և քանի մը մարդ յանձնեց իրեն, որոնք Ֆրանսայի զինուորական կարգին պէս վարժըվելով՝ հետքը Նունճիթ Սինկին զինուորները եղան։ Սկիզբ հետը Ալարդ հարիւր հոգի ալ վարժեց և պատերազմական գործակալներուն պաշտօնները սորվեցուց անոնց։ Ամէն մէկ դունդ մը կազմեց՝ հետքը իրեք դունդ րրաւ, անկից հետքը ուրիշ գունդեր ալ եվելցուց։ Քանի որ զինուորները էվելցան իր համբաւն ալ էվելցաւ, և Նունճիթ Սինկ ալ օրէ օր իր հաւատարմութիւնը անոր վրայ հաստատեց իր զօրքերը շատցած տեսնալով։ Այս զօրքերը շուտով վախցուցին մօտակայ դուքսերը՝ որոնք չէին ուզեր թէ Յահուռի Թագաւորութիւնը Նունճիթ Սինկին ձեռքը անցնի։ Ասոնք ալ հետզհետէ իրենց բերդերուն մէջը պաշարվեցան, իրենց ապաստանած տեղերնուն մէջը չանկարճ յալթակմունքի եկան, բայց կեցողները զարնըվեցան կամ հալածական իրենց մարդուր և անձուկ լեռները փախան։ Ամէն Քասէս մէկը չի կրցաւ դէմ դնել. և քանի մը տարիէն ետև Նունճիթ Սինկ առ երկրին ինքնիշխան Թագաւորը եղաւ։ Կըրթութիւնը բարբարոսները յաղթեց. և Ալարդ պատիւով և հարստութիւնով լեցաւ։ Յահուռի մէջ ապարանք մը ունեցաւ, շատ ծառաներու և գերիներու տէր եղաւ, և իր առջևէն զօրքերու գունդ մը կերթար։ Թագաւորին ազգականներէն աղջիկ մը առաւ, և վերջապէս նոյն տէրութեան բոլոր զօրքերուն ընդհանուր զօրագլուխ եղաւ։ Ին ընդարձակ տէրութեան մէջը Նունճիթ Սինկէն ետև ամենէն հարկաւոր, ամենէն զօրաւոր և ամենէն երևելի անձը եղաւ։ Ահա ասանկ յաջողութեան պատահեցաւ Ալարդ զօրագլուխը։

Տանըվեց տարիէն ետև Ալարդ երկրորդ անգամ ուզեց իր հայրենի երկիրը տեսնալ։ Իր կինը մինչև Փարիզ չեկաւ իր հետը. հապա միջերկրական ծովուն վրայ Ֆրանսայի քաղաքներուն մէկը մնաց։ Այս կնիկը Դաղղիացոց սովորութիւններուն և վարքին վրայ չափազանց կըներգանար. շատ անճոռնի բան կըսեպեր որ Դաղղիացի կնիկները երեսնին բաց կըպըրծրծին, և միշտ կըքաղձար իր բնիկ երկիրը դառնալ։

Յահուռի կնիկներուն վիճակը բոլոր Մահմետական երկիրներու կանանց վիճակին հետ գրեթէ նոյն է։ Ամենևին ուժէտ կըմտծնան ամէն կերպ պիտանի դիտելիքներ. շատերը մինչև անգամ ասեղ բռնել չեն գիտեր։ Միշտ տուներնուն մէջը գոյված են, և երկինքը միայն իրենց տափակ տանիքներուն լուսամուտներէն կըտեսնան. կամ թէ որ դուրս ելլան, բոլորտիքը ծած-կած պատգարակներով կերթան, որոնց վրայի ծակէն երկինքը կըտեսնան. անանկ որ՝ Ալարդ զօրագլուխին պատմածին պէս բնաւ հորիզոնը չեն տեսնար։ Յամանակներն

Պատգարակ. Ըհճկեր։

հայելին առջևը կանգնեն, իրենց սև մազերը կարգի դնելով և անձերնին զարդարելով։ Զեռքերնին և ոտքերնին հինայով կրնեցկեն։ Տանը մէջ ոտքերնին չեն ծածկեր. մուճակներնին մետաքսէ շինված՝ և ոսկի թելով բանված են. սենեակին ներս մտած ատեննին դուռը կրձգեն մուճակները. նին. սենեակներնին խիստ ազնիւ կարպետներով ծածկըված են։

Օ. ակներնին ամենևին մոմաւոր վարժութիւն մը չեն ընդունիր. ոչ կարդալ կըսորվին և ոչ գրել։ Խարին ու չարը ճանչնալնին իրենց բնական ազդեցութեանը ձգված է։ Ուրիշը տարու եղածնուն պէս ձի հեծնալ՝ փիղ վարել՝ և հրացան նետել կըսորվին. որով քանի մը տարիէն ետև Ալարդ զօրագլուխին զօրքերուն կարգը մտնալու շատ աղէկ կըյարմարին։

Ռունճիթ Սինկ իր հպատակներէն էվել դիտուն չէ. գիտութիւնը իր պատուակառնութեանը համար չի յարգեր, հապա ուրիշներուն գիտութիւնը իր օգուտին դործածելու համար կուզէ յարգել։ Ինքը չիտուներուն տարեկանի չափ կայ. շատ տգեղ է. մէկ աչքը կոյր է. ուժեղ՝ գործունեայ՝ շատ մտածող՝ պատերազմասէր՝ և համարձակ է, ու սքանչելի համբերութիւն ունի։ Երբոր Ալարդ զօրագլուխը Գուանտա տեսնալու համար Ղահուէն պիտի երլար, թագաւորը բնաւ չի հաճեցաւ. շատ դէմ կեցաւ իր սիրելին բաղձանքը կատարելու։ Ա երջը ըսաւ թէ, «Գոնե զաւկրներդ հոս թող մնան, և անատեները քու դառնալուդ վրայ ապահով կըլլամ»։ Պատասխան տըւաւ Ալարդ. «Ինչպէս իմ զաւկրներս հոս պիտի մնան. անոնց համար է որ ես Իրան երթալ կուզեմ. քանզի միայն հոն անոնք իմ կրօնքիս և անոր սովորութիւններուն մէջ կրնան վարժըվիլ»։ Ըս խօսքին վրայ թագաւորը աւ դէմ չի կեցաւ։ «Ո. րովհետև կրօնքիդ վրայ ինծի խօսեցար, ըսաւ ինքը, աւ չեմ կրնար քու կամքիդ հակառակ կենալ. ասիկա միայն քու խղճմտանքիդ վերաբերեալ բան մըն է, և ամեն մարդ պարտի իր հաւատքին հետևիլ, և կապված է անոր պատուիրանքները պահել։ Ուստի քեզի հրաման է երթալու»։ Ըս խօսքերը խօսած ատենը իր կիրքը խիստ շարժեցաւ. ատեն մը խորունկ մտմըտուքի մէջ մնաց, որպէս թէ կըտակուսերկոր զօրագլուխէն բաժնըվելու վերջին պրկախառնութիւնը ընել. վերջը զինքը անոր թևերուն վրայ ձգելով և դառնարսուք լալով՝ հրաման տըւաւ իրեն և ըսաւ. «Երթաս բարով, գնա խաղաղութեամբ»։

Ուստի Ռունճիթ Սինկը բոլորովին բարբարոս մարդ չէ։ Ալարդ զօրագլուխը կըպատմէ թէ, շատ անգամ իր խորհրդականները՝ որոնցմէ ոմանք Մահմետական են, աղօթքի ժամանակը եկածին պէս խորհուրդը չի լըմնցած կելլան սրահին մէկ կողմը կերթան և աղօթքնին կըկատարեն։ Թագաւորը սքանչելի համբերութեամբ կսպասէ, մինչև որ աղօթքնին լըմընցունեն ու դառնան։

Ռունճիթ Սինկը շատ մեծամտօրէն բանեցու վրայ սխորժանկներ ունի։ Ըս սխորժանկներուն միայն մէկը յագեցունելու համար՝ մէկ մարդ մը մեծամեծ դանձերու տէր ըլլալ պէտք է։ Շատ կըսիրէ ան կերպ ոսորդութիւնը որ Ըրեւելեան երկիրներու մէջ կըլլան։ Տարապայման ցանկութիւն մը ունի զոհարներու և անդամանդներու, ու զեղեցիկ ձիեր ունենալու։ Ընդամ մը լսեր է որ Աղուլհստանի դեռ իր իշխանութեանը տակ չանցած մէկ մօտ մասին մէջը խիստ ազնիւ ձի մը կայ։ Ուստի լսեցներ խրկեր է որ ստուգելով իրեն իմացունեն անանկ ձի մը գտնըվիլը՝ և անոր գըտնըված ճիշտ տեղը։ Ըս երկու բանը ստոյգ իմանալեն ետև՝ տասը հազար զօրքով գունդ մը խրկեր է որ կենդանին բռնեն երեն բերեն։ Օրքերը շատ սահմաններ անցեր են, շատ ստակ ծախեր են, շատ կռիւներ ըրեր են իրենց ճամբուն վրայ, և չեն դարձեր՝ մինչև որ ձին Թագաւորին ձիերուն կարգը բերեր դասեր են։ Ըս կերպովս ինքը ստացեր է նաև աշխարհիս վրայ գտնըված հանականաբար ամենապատուական անդամանդները։ Ընդամ մալ լսեր է թէ մօտակայ պղտի Թագաւոր մը Պեճն Պոնկոլին մէկ անդամանդ քարը ունի՝ այնչափ ազնիւ և ջուրը աղէկ, որուն նմանը դեռ լսված չէ։ Ռունճիթ Սինկ խորամանկութեամբ աս քարը ձեռք ձգել ուզելով, ան Թագա-

ւորը իրեն պալատը հրաւիրեր է, և անոր անձին տեր ըլլալով՝ անդամանդը իրմէն պահանջեր է։ Ծառաւորը քիչ մը դէմ կեցնալէն ետև տեսնալով որ ձեռքէն ազատելը անհնար է՝ քարը տըւեր է։ Ասանձիթ Սինկ չափազանց ուրախութեամբ ակնապոյծին տըւեր է քարը որ բոլորտիքը պատէ. բայց ոչչափ զարմացեր և ինչ սաստիկ բարկութեան մէջ ինկեր է, երբոր ակնագործը իրեն զրուցեր է թէ ան անդամանդ կարծըված քարը սուտ է՝ ապակիէ մը կտոր է։ Ասանձիթ Սինկ իսկոյն զօրքերու գունդ մը խրկեր է որ երթան ան թագաւորին պալատին մէջը փնտռըեն քարը։ Զօրքերը տեղ չէ մնացեր որ չփնտային, բայց եւ իրենց բաղձացած բանը չեն գտեր։ Հատ երկար փընտռըտուքէն ետքը՝ թագաւորին գերիներէն մէկը կաշառք ուտելով իր տէրոջը գաղտնիքը յայտներ է, և քարը մը խէրի դէզի մը մէջ թաղված գտնըվեր է։ Ասանձիթ Սինկ քարը ոսկի բազպանի վրայ գամել տըւած անկէ՝ի վեր իբրև նշան յաղթութեան կը գործածէ անիկա։ Նրևելի օրերը գլուխը ուրիշ շատ աղնիւ քարեր ալ կըզնէ, որոնք կարգէ դուրս մեծութիւն և գեղեցկութիւն ունին. կըսվի թէ Ասանձիթ Սինկին անդամանդները աշխարհիս վրայ գտնըված քարերուն ամէնէն մեծագիններն են, և իր ատեաններն ու պալատին զարդարանքը և փառաւորութիւնը, իր ալըտրտելու հանդէսին և բոլոր իր բաներուն շքեղութիւնը ամէն ընևելեան թագաւորներուն ունեցած փառաւորութենէն գերազանց էն։

Ան աքանչելի մարդուն և իր տէրութեան վրայ՝ կըխոստանանք հետևեալ թըւոյն մէջ ալ քիչ մը խօսիլ։

Անհաւան հիւանդները։

Յաճախ մտածէ թէ մահը ինչպէս պիտի փոփոխէ մեր վիճակը։ Մենք ան աշխարհիս մէջը անխմանալի և ահաւոր մեծութենէն միայն մէկ բարակ ցանկով մը կամ պատով մը բաժնըված ենք. քանդի հոգևոր և յաւիտենական աշխարհը մօտ է մեզի։ Ըն վայրկեանին որ կըմեռնինք, ան պատը կըփլչի. ան ան վարագուրը որ մեր մէջը և հանդերձեալ աշխարհին մէջը ձգված էր՝ կըպատռի. և մենք խոկոյն մէկ նոր և քանչելի վիճակի մը մէջ կըմտնանք՝ հոգիներուն աշխարհին մէջը, բոլորովին արթուն և ամէն բանի տեղեակ։ Ո՛նչ զարմանալի և մեծ վիճակ մըն է ան. ասոր խորհուրդը անգամ կըպաշարէ մարդս։ Հոգևոր կամ հանդերձեալ աշխարհը հոգիին և իր կարողութիւններուն առջին բացվելով՝ իր անհուն ընդարձակութիւնովը, իր առարկաներուն նորութիւնովը, փառքովը, պայծառութիւնովը, և իր բնակիչներուն զըրութիւնովը, և հոն նոր մտած օտարականին վրայ եղած հարցուփորձներուն մեծութիւնովը շատ ահաւոր կերևայ։ Ուստի՞ կարդացողք, չէ՞ք կարծեր որ դուք անատեր կըկարօտիք օգնութեան և մարդասէր ձեռքի մը ձեղի հասնելուն՝ որ առաջնորդ և վերակացու ըլլայ ձեղի։ Դուք ան բանէս զուրկ չէք. ամենակարող փրկիչին աշակերտները եղէք, որ ինքը իբրև ձեր բարեկամը մեռաւ, բայց կենդանի է յաւիտեան. որ ինքը առաջ գնաց իրեն հետևողներուն հանգստութեան և բերկրութեան տեղեր պատրաստելու։ Ցայտ որ հաւատալիմ ըլլաս հիմայ, և ան անճառելի երկրին մէջ բոլոր քեզ սարսափեցուներու բաներուն մէջը ինքը քեզի օգնական պիտի ըլլայ։ Ինքը քեզ իր քովը պիտի առնէ, որ ինքը ուր է նէ՝ դուն ալ հոն ըլլաս։

Պալատին։

Պալատին մեծ թագաւորը Թէպէտ և Մահմետական էր, բայց շատ Վրէպտոտներէն խմաստուն էր։ Եգիպտոսը նուաճելէն՝ Եփրատ գետը անցնելէն՝ Երուսաղէմ քաղաքը նորէն աւնելէն և շատ երևելի քաջութիւններ ընելէն ետև, իր կեանքը անանկ գործով մը վերջացուց, որ յիշատակվելու արժանի է։ Ժառանգելու ատենը կանչեց իր զրօշակակիրը՝ որ բոլոր պատերազմներու մէջ իր առջևէն զրօշակ կըբռնէր, և պատուիրեց անոր որ գաւազանի մը ծայրը կապէ իր պատանքը որուն մէջը շատ չանցած պիտի պատնըվեր։ «Երթա՛, ըսաւ Պալատին, պըտըտցուր աս գաւազանը պատանքս վրան բացված, և աներկա բարձր բառնալով կանչէ. Ըսկա՛յ է, միայն ասիկա՛ որ է մեծն Պալատինին փառքէն իրեն կըմնակոր»։

ԲԱՂԱՄ

Նբ. յեղեգեայ ընտրելին Լաբգամանուիլեանը։
Թուոց. իբ. 2—36։

Եւ Բաղակ Սեպփովրայ որդին Մարայեղացոյ Ամովրհացիներուն ըրած բոլոր բաները տեսաւ։ . . . Ուստի դեսպաններ խրկեց Բաղաամին Բէովրայ որդին՝ ու կոչնակէր փաթուր, . . . անկիկա կանչելու՝ ըսելով. Ահա ելած ժողովուրդ մը ելաւ. ահա երկրին երեսը կըծածկեն, և իմ դէմս կըբնակին։ Ուստի հիմայ՝ կաղաչեմ քեզի, եկուր անիծես ասոր ժողովուրդը ինծի. քանզի անոնք շատ զօրաւոր են ինծմէ. որ ըլլայ թէ զօրանամ՝ ու անոնք զարնենք, ու երկրէն վռընտենք անոնք. քանզի գիտեմ որ քու օրհնածդ օրհնած է, և քու անիծածդ անիծած է։ Ու Մովաբի ծերակոյտը և Մադիամու ծերակոյտը ձեռքերնին մղեմեան վարձքեր առած գացին. ու եկան Բաղաամին՝ և Բաղակին խօսքերը իրեն ըսին։ . . . Ու Բաղաամ առտուընանց ելաւ՝ և իր էշը համեստեց, ու Մովաբի իշխաններուն հետ գնաց։ Ու Աստուծոյ սրտմտութիւնը բորբոքեցաւ անոր երթալուն համար. ու Եհովային հրեշտակը ճամբան կայնեցաւ անոր դէմը հակառակ ըլլալո՝ համար։ Ու ինքը իր էշը հեծեր էր, ու իր երկու ծառաներնին իր հետն էին։ Ու էշը Եհովային հրեշտակը ճամբուն վրայ կայնած տեսաւ, և իր թուրը քաշած իր ձեռքը. ու էշը ճամբէն դուրս դարձաւ, և դէպի դաշտը կերթար. ու Բաղաամ էշուն զարկաւ անիկա դէպի ճամբան դարձնելու համար։ Բայց Եհովային հրեշտակը այգիներուն ճամբուն մէջը կայնեցաւ.

–ը կոպ պատ մը աս կողմին վրայ և պատ մը ան կողմին վրայ ։ Ու երբոր հեղը Նէհովայի հրեշտակը տեսաւ , ինքզինքը պատին զարկաւ՝ ու Բաղաամին ոտքը ձզմեց պատին դէմը . և ան նորէն զարկաւ անոր ։ Ու Նէհովային հրեշտակը առաջ գնաց՝ ու նեղ տեղ մը կայնեցաւ , ուր որ ձամբայ չի կոպ աջ կողմը կամ ձախ կողմը դառնալու ։ Ու երբոր հեղը Նէհովային հրեշտակը տեսաւ , Բաղաամին տակը վար ինկաւ , ու Բաղաամին բարկութիւնը բորբոքեցաւ , և զասաւ զանով հեղուն զարկաւ ։ Ու Նէհովայ հեղուն բերանը բացաւ , ու ըսաւ Բաղաամին . Աս քեզի ի՞նչ ըրի , որ աս իրեք անգամ ինծի կըզարնես ։ Ու Բաղաամ հեղուն ըսաւ . Օ,հս ծաղր ընելուդ համար . Թէ որ իմ ձեռքս Թուր մը ըլլար , հիմայ քեզ կըմեռցունէի ։ Ու հեղը Բաղաամին ըսաւ . Չէ՞ որ ես քու հեղդ եմ , որուն վրայ կըհեծնայիր քանի որ քուկդ եմ մինչև աս օրը . քնաս սովորութիւն ունէի՞ քեզի ասանկ ընելու ։ Ան ալ ըսաւ՝ Չէ ։ Ընտանեաց Աստուած Բաղաամին աչքերը բացաւ , և ան Նէհովային հրեշտակը ձամբուն վրայ կայնած տեսաւ , ու իր Թուրը քաշած իր ձեռքը . և ան գլուխը խոնարհեցուց , ու երեսին վրայ ինկաւ ։ Ու Նէհովային հրեշտակը իրեն ըսաւ . Ինչու համար քու հեղուդ զարկիր աս իրեք անգամ . ահա ես քեզի հակառակ կենալու եկայ . քանզի ինծի ձամբադ իմ առջևս շիտակ չէ ։ Ու հեղը տեսաւ զիս , և աս երեք անգամ է՛ր ինձմէ դարձաւ . Թէ որ ինձմէ չի դառնար , անշուշտ հիմայ քեզ մեւսյուցած էի , ու անիկա ողջ պահած ։ Ու Բաղաամ Նէհովային հրեշտակին ըսաւ . Մեղայ , քանզի չէի գիտեր Թէ դուն ձամբուն վրայ կայներ ես ինծի դէմ . ուստի հիմայ Թէ որ քեզի հաճոյ չէ նէ նորէն ետ կըդառնամ ։ Ու Նէհովային հրեշտակը Բաղաամին ըսաւ . Գնա ան մարդոցը հետ . բայց միայն ան խօսքը որ ես քեզի պիտի խօսիմ , անիկա պիտի խօսիս ։ Ընտանեաց Բաղաամ Բաղակին իշխաններուն հետը գնաց ։

Ա–ԻՈՒՆ–ԵԱՄԲ ԴԱՆԵԼԻ–Ի ՎՐԱՅ։

Քրիստոնեաներ , մեռնելու խորհուրդը տեսէք Ընաքեալին աս խօսքին մէջ . «Ընտնք ամէնն ալ հաւատքով մեռան» ։ Եբր . ժա . 13 ։ Գիշ մարդիկ ակամայ կամքով կըմեռնին . կեանքը իբրև Թէ բռնութեամբ կելլայ իրենցմէ ։ Բայց ճշմարիտ հաւատացեալը յօժար կամքով կըմեռնի . իր կամքը իրեն երկնաւոր Հօրը կամքին հնազանդած է ։ Ինչպես որ ինքը Յիսուս իր՝ հոգին իր հօրը ձեռքը կըյանձնէ , ըսելով «Հա՛յր , ի ձեռս քո ամանդիմ զհոգի իմ» , Ղուկ . իգ 46 , ասանկ ալ Յիսուսի հաւատացեալ աշակերտը իր հոգին Յիսուսի կըյանձնէ , և անոր միջնորդութեամբը՝ Հօր Աստուծոյ ։ Ահա հոս է ուրախութեամբ մեռնելու խորհուրդը ։ Մեռնիլը զարհուրելի բան մըն է անոնց՝ որ աս խորհուրդը չեն գիտեր ։ Ու Թէպետ ամէն մեկուն երևելի բան մըն է աս , բայց աշխարհիկ և ամբարիշտ մարդոց մեռնիլը անանկ բան մըն է՝ ինչպես որ Աբիստոտէլ հեթանոս փիլիսոփաներուն մէկը կը խոստովանէր . «Ամէն զարհուրելի բաներուն խիստ զարհուրելին» ։ Աշխարհիկ մարդոց ժողովքի մը մէջ դրացիի մը մահը միայն յիշէ , և ահա բոլոր ժողովքին վրայ տրտմութիւն մը կըբերես մահուան խօսք բանալուդ համար . բոլորն ալ յայտնապէս տրտմութեան մէջ կիյնան ։ Հին Հռովմայեցիները Թէ որ կարելի էր՝ պարզ բառերով բայց յայտնի էին խօսքեր մահուան վրայ , հապա շրջաբանական և փոխաբերական խօսքերով կիմացունէին միտքնին ։ Ընանկ ալ կռապաշտները մինչև աս օրս անհատես վկայի մը բաժին պէս՝ «Ահը իրենց զգայութիւններուն խիստ հակառակ բան մը պէս ամենևին չեն խօսակցիր անոր վրայ . անանկ կըհամարին Թէ մինչև անդամ մահուան դուռը հասած հիւանդ բարեկամի մը մեռնելուն վրայով խօսիլը իր ազգականներուն՝ մեծ անպիտութիւն է» ։ Ինչև անդամ բարեպաշտ Քրիստոնեաները ևս շատ անգամ մահին վախովը ծառայութեան մէջ կինկած են ։ Բանզի մահը անանկ զարհուրելի բան է , մահուան պատրաստը վերու մէջ սխալմունք մը գործելը անանկ դիւրին և անանկ սոսկալի է , Աստուծոյ առջևը երթալը անանկ ահաւոր է , դատաստանը անանկ գաղտնիքներ երևան պիտի հանէ , որ շատերը կըմտածեն՝ Թէ «Ինչպես կրնամ մեռնիլ» ։ Ու սակայն ամենքդ ալ պիտի մեռնիք ։ Հաւատացէք

խօսքիս, ձեր հոգիները հիմայ Յիսուսի յանձնեցէք, և անանկ ըրէք ամէն օր. և եթէ երբոր ձեր մեռնելու օրը կուգայ, նորէն փրկիչին մօտիկցէք և ըսէք. «Տէր, կըլսեմ որ դուն իմ հոգիս կրկանչեսկոր. կրսեսնամկոր ան կառքը որ զիս քեզի բերելու խրկըվեր է. մահուան ձեռքովը կըձանչնամկոր որ դուն քու սիրոյդ ձեռքը երկընցուցեր ես. իմ հոգիս կուզեսկոր. առ ան, քանզի քուկինդ է ան։ Ինչ որ կուզես նէ ըրէ անոր. ես քեզի տուի անիկա՝ որ քու արուեստիդ մէջը լուացվի և քու Հոգիովդ սրբըվի. գիտեմ որ դուն վնաս մը չես հասցուներ անոր»։

Ընդհօք անանկ խորհուրդ մըն ալ կելլայ միտքէդ, թէ իմ խղճալի մարմինըս ինչ պիտի ըլլայ։ Ամէն որ քու մարմինդ Յետ փաննոսինին պես քարկոծվեր, թէ որ անիկա ցեցի մը վրայ երվեր, և գանազան կերպերով տանջըվեր, հոգդ ըլլալու չէ։ Մի՛ այն նայէ որ հոգիդ ազատ ըլլայ, և եթէ մարմինին ինչ որ պատահի նէ՝ Յիսուս քու հողդ և մոխիրդ պիտի պահպանէ։ Իր հաստատիմ ծառաներուն մնացորդները աս նիւթական երկրիս խիստ պատուական մասերն են իրեն։ Ամէն անոնք իր վերջին գալստեանը դրաւ են։ Վանզի թէ որ ձեր հոգիները ճշմարտապէս իրենը ըլլան, ինքը անկից ետքը ձեր մարմինները իր մարմինին պէս փառաւորեալ՝ անապական և անմահ ընելով պիտի յարուցանէ։

Բրիսպոնէական Լուր։

Բրիստոնեայ մը որ հեղ՝ մարդասէր և համբերող է, և ուրիշներուն օգուտին համար կաշխատի, որ անոնց տգիտութեանը՝ տկարութեանը և պակասութիւններուն կըզջայնի, որ համբերութեամբ և լուռ Թեամբ բանի տեղ չէ սեպեր գրգիռները՝ վնասները և անպզտանքները՝ միայն Թէ երբոր Աստուծոյ փառքը և ճշմարտութեան պատիւը պարտաւորէ զինքը վրէժխնդիր ըլլալու, որ ամէն տեսակ մարդիկ իրենց սխալմունքներուն և յանցանքներուն մէջ կրխղճայ, նախանձութենէ և զէշ կարծիքներ ունենալէ ազատ է, ամէնուն վրայ գանըլած աղէկութիւնները՝ և մինչև անգամ իր Թշնամիները կրսիրէ, ասանկ անձը լաւագոյն կըցուցընէ Քրիստոնէական վարքը կամ ճշմարիտ Քրիստոնէութիւնը, քան Թէ հազարները որոնք առանց աս կերպ մտքի տէր ըլլալու իրենց սիրոյ և բարեպաշտութեան խիստ երևելի գործքերովը կրնան ցուցընել։ Քանզի մարդիկ Քրիստոսի օրինակին հետևելու կեղծաւորելով՝ հպարտ, բարկացող, նախանձոտ, երկրքէն կրակ իջեցունելու սպառնացող մարդիկ կորսընցունելու համար, կամ քանի իրենք դժոխքէն կրակ բերող ըլլան նէ, Յուդայի նման՝ «Ողջ լե՛ր վարդապետ», կրկանչեն իրենց Փրկիչին, և անիկա նորէն խաչը կըհանեն։

Յունիս ամսոյն վրայ։

Լատինացոց տօմարին մէջը աս ամիսը կրկոչվեր Յունիպերիս, որ կընշանակէ հինգերորդ ամիսը ան տարիին՝ որ միայն տասը ամիսէ կըբաղկանար, ու ամիներուն երկայնութիւնը շատ տարբեր էր իրարմէ. ոմանք մինչև երասունըվեց օր ունէին, և ուրիշները տասնըվեց օրէն էվել չունէին։ Հոմուլոս աս տարբերութիւնը կարգի դրաւ, և կարգաւ մէկ ամիսին երասունը մէկ օր ու մէկալին երեսուն օր տըւաւ. բայց հոգ չի տարաւ Լատինացոց տօմարին մէջն էվելցած օրերը կարգի գնել որ լըման արեգակնային տարի մը հաստատէ։ Ասոր Նումաս անունք ժողվեց երկու ամիսի բաժնեց, մէկին քսանըմինը ու մէկալին քսաներութը օր տըւաւ, ու Մարտ ամիսէն առաջ դրաւ անունք, և իր տարին Յունվարի առջի օրէն սկսեց։ Ասանկով Յունիսը տարիին եօթներորդ ամիսը եղաւ, թէպէտ և կուհինտիլիս կըկոչվեր իր առջի անունովը՝ մինչև Մարկոս Անտոնինոսի ժամանակը, որ՝ի պատիւ Յուլիոս կեսարին՝ և անոր ըրած կարգադրութեանը անմոռաց յիշատակ ըլլալու համար, փոխեց Յուլիս կոչեց անիկա։

Աս ամսուն արեգակը Արիւծ կենդանակերպը կըմտնայ. անոր համար շատ պատկերներու մէջ աս ամսուն գլխաւոր նշանին հետը առիւծ մալ կընկարեն։ Յունիսի 21 էն մինչև Յուլիսի 29ը Շնիկ անունով աստղ մը արեգակին հետը ծագելուն համար, ան օրերը կրկոչվին՝ Շնիկ աստղի օրեր։ Հինները կրկարծէին թէ աս աստղին չար ներգործութիւնը կրզգացնէ գինիին թթուիլ, շուներուն խենթենալ, և ամէն տեղ ծաւածներուն թուլնալ տկարանալ։ Արդյոք մէջ ալ տենդ կամ բորբոք, և ուրիշ վնասակար հիւանդութիւններ կրզգացնէ։ Աս աստղին վնասակար ներգործութիւններուն վրայ եղած աս բաղմաթիւ կարծիքները հիմայ ջրված են, բայց տակաւին անուշնը ան եղանակին վրայ է, ու Շնիկ աստղին օրերը սաստիկ ջերմութեան կրսպասենք։